29
ԱՊՐԻԼԻ
2022

Luys Lnyu®

ԿՐԿԻՆ՝ ԱՆՂԵԿ, ՑԱՔՈՒՑՐԻՎ, ԱՆԳԱՂԱՓԱՐ

Տգիտությունը, կեղծիքն
ու աճպարարությունը նոր աղետ են գուժում

ԿՐԿԻ՞Ն՝ «ԱՆՂԵԿ, ՑԱՔՈՒՑՐԻՎ, ԱՆԳԱՂԱՓԱՐ»

Տգիտությունը, կեղծիքն ու աճպարարությունը նոր աղետ են գուժում

Տիգրան Թորոսյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

Պատմության քառուղիներով
Մենք քայլել ենք երկար՝
Անղեկ, ցաքուցրիվ, անգաղափար,
Շառագունված անվերջ ուրիշների հրով...
Շառագունված - որքա՜ն, որքա՜ն աղետավոր...
Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Մերկության պես տկլոր ու անանցյալ...
Եղիշե Չարենց, Պատմության
քառուղիներով, 1933թ.

Արցախյան առաջին պատերազմում անսահման նվիրումի ու աստվածապարգև ոգեղենության շնորհիվ տարած աներևակայելի հաղթանակն ու 2000-ականների սկզբին սոցիալ-տնտեսական կյանքի կտրուկ բարելավումը հույսեր արթանացրին, որ կտրվում է մեր պատմության տևական ժամանակահատվածը բնորոշող կործանարար շղթան, որի ֆիզիկական զգացողության աստիճանի ցավոտ, սակայն մաթեմատիկական ճշգրտություն ունեցող ընդհանրական բանաձևը տվել է Եղիշե Չարենցը: Սակայն, հավանաբար երկար ու ձիգ ձախողումներին հաջորդող հզոր պոռթկման դրսևորումն ավելի հեշտ է, քան հանկարծահաս հրաշքից հետո առաջացող սնապարծությունից ծնված գայթակղություններին դիմակայելը, որոնց տուրք տալը կարող է կործանել նաև այդ պոռթկման ձեռքբերումները: 2020թ. աղետաբեր պատերազմը[1] դրա ցայտուն դրսևորումն է:

[1] Թորոսյան Տ., 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, 9.03.2020, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

Սակայն խնդիրը պատերազմը չէր՝ դրան սիրիական ահաբեկչական խմբերի ու Թուրքիայի բացահայտ մասնակցությունը, բայրաքթարների առկայությունը, Բաքվի գերակշռող ֆինանսական հնարավորությունները և այլն: Խնդրահարույց գործոնը Հայաստանի իշխանությունն է ու իր վարած քաղաքականությունը 2018թ. իշխանափոխությունից հետո՝ հիմնված ստի, կեղծիքի ու աճպարարության վրա: Դրա ակնհայտ դրսևորումը գրանցվեց Ազգային ժողովում կառավարության 2021թ. բյուջեի կատարողականի հաշվետվության քննարկման ընթացքում հնչած ծրագրային մոտեցմամբ, որի առանձնահատկությունն էր ոչ միայն Արցախի խնդրի լուծման վերաբերյալ իշխող քաղաքական ուժի աղետաբեր պատկերացումների բացահայտումը, այլև ստի, կեղծիքի ու աճպարարության նոր մակարդակի կիրառումը՝ խճճվելով պարզունակ դատողությունների հակասություններում ու հասնելով սեփական հանցավոր քայլերի ինքնագնահատականի: Ստորև, փաստերի ու փաստաթղթերի, այդ թվում՝ միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերի հիման վրա կներկայացվեն այդ «քննարկման» ընթացքում բերված ու նոր աղետներով հղի «գաղափարների» և խնդրահարույց պատկերացումների սնանկությունը, դրանց «հիմնավորման» նպատակով կիրառված կեղծիքը, սուտն ու աճպարարությունը, նաև կբացահայտվի, որ դա ոչ միայն լիակատար տգիտության կամ հոգեկան անհավասարակշիռ վիճակի դրսևորում է, ինչպես ոմանք կարծում են, այլ հրեշավոր ծրագրի մեկնարկի փորձ՝ այդ ամենի քողի ներքո:

Աճպարարություն փաստաթղթերով

Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային փաստաթղթերով աճպարարությունն այս քննարկման ժամանակ հասել է իր գագաթնակետին: Հատկանշանակ է, որ անգամ փաստաթղթերի որևէ մատնանշում երբեք չի ուղեկցվել դրանց հրապարակմամբ կամ հղմամբ որևէ հրապարակման: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր աճպարարի երազանքն է ունենալ աճպարարության վերացական առարկա. կուզես, այն կանվանես նապաստակ, կուզես՝ փիղ, կուզես՝ գլխարկ կամ ժապավեն և այլն: Ավելին, վերացական առարկան կարելի է առանց որևէ ջանքի «վերափոխել» այլ վերացական առարկայի, օրինակ, փիղը՝ ժապավենի: Ահա «փաստաթղթային» աճպարարության նման օրինակ.

> «Այն բանակցային թուղթը, որ իմ սեղանին դրված է, վերնագիրը եղել է հետևյալը. «ԼՂ կարգավորման առաջին փուլի և հետագա քայլերի մասին»: Այսինքն՝ այն մարդը, որն ասել է, որ փուլային լուծումը պարտվողականություն է, 2018-ին բանակցային սեղանին թողել է մի

թուղթ, որի վերնագիրը դա է: Այսինքն, փուլային լուծման դեմ իշխանափոխություն անող մարդը եկել հանգել է նորից փուլային լուծման»[2]:

Սա կարելի է գնահատել որպես խնդրի էությունից անտեղյակ ունկնդրին աճպարարությամբ խճճելու դասական օրինակ: Նախ խոսվում է սեղանին դրված անհայտ թղթի մասին, ապա հիշատակվում է դրա վերնագիրը, հետո էլ սկսվում է բառախաղ «փուլային» բառով: Որևէ փաստաթղթի մասին խոսելիս, եթե անգամ այն նախագիծ է, պետք է այն հրապարակել, որ լսողների համար պարզ լինի, թե ինչի մասին են դատողություններ արվում, և խոսողի ասածները հավաստիության հիմքեր ունենան, մինչդեռ խոսվում է սեղանին եղած ինչ-որ թղթի մասին: Մեջբերման երկրորդ հատվածում հավանաբար դրա հեղինակը չի նկատում (կամ հույսը դնում է անփորձ ունկնդրի չնկատելու վրա), որ «փուլային կարգավորումը» և «փուլային լուծումը» բացարձակապես տարբեր բաներ են: «Փուլային լուծում», որն առաջարկվում էր 1997թ., նշանակում էր ընդունել փաստաթուղթ և այն իրականացնել (այդ թվում և հայտնի շրջանների վերադարձը)՝ անորոշ թողնելով մի շարք հարցեր, այդ թվում՝ Արցախի կարգավիճակը: Գոնե 2020թ. պատերազմից հետո տեղի ունեցած և շարունակվող իրադարձությունների պայմաններում կույր պետք է լինել, չտեսնելու համար, որ 1997թ. «փուլային» լուծումը ընդունելիս Արցախը շատ արագ հայաթափվելու էր: Մինչդեռ «փուլային կարգավորումը», որն առաջարկվում էր մինչ 2018թ. իշխանափոխությունը, նշանակում էր, որ բոլոր հարցերի (այդ թվում և Արցախի կարգավիճակի) լուծումը և դրա իրականացման քայլերի հաջորդականությունը արձանագրվում էր մեկ փաստաթղթով, իսկ քայլերն արվելու էին փուլերով (բոլոր քայլերը միանգամից ու միաժամանակ անել հնարավոր չէ և չի արվել որևէ ինքնորոշման հակամարտության դեպքում): Մինչև 2018թ. իշխանափոխությունը եղած փաստաթղթի վերաբերյալ Հայաստանի ներկայիս իշխանությունների կեղծիքներն ու աճպարարությունները 2021թ. հունվարին բացահայտել է Մինսկի խմբի ռուս համանախագահ Ի. Պոպովը[3]՝ ի պատասխան Հայաստանի վարչապետի հրապարակած «44-օրյա պատերազմի ծագումը» հոդվածի[4] հաստատագրումներին.

---

[2] Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն վիճակը՝ իհարկե առանց զոհերի. Փաշինյան, 13.04.2022, https://news.am/arm/news/696384.html

[3] Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна «Истоки 44-дневной войны», www.mid.ru\ru\foreign_policy\news\\asset_publisher\cKNonkJE02Bw\content\id\4519475

[4] Ն. Փաշինյան, 44-օրյա պատերազմի ծագումը, https://www.primeminister.am/hy/interviews-and-pressconferences/item/2021/01/04/NikolPashinyan-04-01/

«Ռուսական առաջարկներ ասելով՝ հավանաբար ենթադրվում է փուլային կարգավորման պլանը, որի վերջին խմբագրումը կողմերին փոխանցել են Մինսկի խմբի համանախագահները 2019թ. հունիսին: Կազանյան փաստաթղթի հետ շատ բաներով համընկնող այդ պլանի հիմքում ընկած են ԼՂ կարգավորման բազային սկզբունքները, որոնց շարքում առաջին փուլում հինգ շրջանների վերադարձն է Ադրբեջանին, իսկ երկրորդ փուլում՝ երկու շրջանների, ընդ որում, հատուկ ընդգծում եմ, դա կապելով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ: Առաջին փուլի Երևանի հետաքրքրություններն արտացոլող տարրերից են Լեռնային Ղարաբաղի՝ իր բնակչության լիարժեք կենսագործունեության ապահովման իրավունքի ընդունումը, ԼՂ ներկայացուցիչների մասնակցությունը ԵԱՀԿ նիստերին, շրջափակման վերացումը, ուժի չկիրառման վերաբերյալ կողմերի պարտավորությունների ստանձնումը և այլն: Այդ պատճառով պնդումը, որ Ռուսաստանն առաջարկում էր 7 շրջանները վերադարձնել «հենց այնպես» և մոռանալ կարգավիճակի մասին, չի համապատասխանում իրականությանը: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի խնդրի լուծման տարբերակներին, ապա վերջին տարիներին բանակցությունների սեղանին գտնվող առաջարկները՝ որպես վերջնական նպատակ նախատեսում էին, մեջբերում եմ. «Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը կողմերի համաձայնեցրած ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո համաժողովրդական քվեարկության անցկացում, որը կարտահայտի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և կունենա իրավականորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն: Ընդ որում, քվեարկության դրվող հարցը կամ հարցերը որևէ ձևով չեն սահմանափակվի, իսկ քվեարկության ցանկացած արդյունք կողմերը կհարգեն»: Ի դեպ, Լաչինի միջանցքի լայնությունն ու կարգավիճակը ևս առաջարկվում էր դիտարկել միայն երկրորդ փուլում՝ հաշվի առնելով Քելբաջարի և Լաչինի շրջաններն Ադրբեջանին վերադարձնելը: Ո՛չ հայկական, ո՛չ ադրբեջանական կողմերը չեն մերժել այդ առաջարկությունները, թեև լիարժեք համաձայնության

հասնել չէր հաջողվում: Ընդհուպ մինչև 2018թ., երբ Երևանն առաջադրեց նոր մոտեցումներ»[5]:

Ի դեպ, այս մեջբերման վերջին նախադասությունն ակնհայտորեն հաստատում է, որ բանակցությունները ձախողվել են Հայաստանի ներկայիս իշխանությունների «նոր մոտեցումների» պատճառով:

Քանի որ տևական բանակցային գործընթացներում ի հայտ են գալիս նախագծերի զգալի թվով տարբերակներ, փորձ է արվում խնդրի էությունից անտեղյակ ունկնդրին խճճել՝ նաև օգտագործելով դա:

«Համանախագահները հունվարին ներկայացնում են բանակցային փաթեթ, որի իմաստն այն է, որ Լեռնային Ղարաբաղը միջանկյալ կարգավիճակ չի ունենալու: Հայկական կողմը, բնականաբար, մերժում է, որից 2 ամիս հետո տեղի է ունենում ապրիլյան պատերազմը: Դրանից հետո հուլիսին ներկայացվում է երկրորդ փաթեթը, որտեղ արձանագրվում է, որ Ղարաբաղը միջանկյալ կարգավիճակ չի ունենալու: Օգոստոսին ներկայացվում է երրորդ փաթեթը, որտեղ ավելանում է նոր բաղադրիչ. ավելանում է ՄԱԿ-ի ԱԽ բանաձևի նախագիծ: Սա նշանակում է, որ ԼՂ կարգավիճակի հարցը 2016-ի դրությամբ դուրս է եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով տեղի ունեցող բանակցությունների տիրույթից»[6]:

Այս աճպարարության հաջողությունն ապահովելու համար կրկին խոսվում է անհայտ «փաթեթի» մասին՝ դրա մասին դատողություններ անելով: Սակայն, անգամ անփորձ ունկնդրին կամ ընթերցողին էլ պարզ է, որ առաջին երեք նախադասություններում արդեն դրա հեղինակը խճճվել է: Ի. Պոպովի վերոհիշյալ հղումը 2019թ. հունիսին ներկայացված փաստաթղթին ակնհայտորեն նկարագրում է նման կարգավիճակի տարրերը:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ իբր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդիրը 2016թ. դրությամբ դուրս է եկել Մինսկի խմբի բանակցությունների տիրույթից, ապա զարմանալի է, որ Հայաստանի կառավարությունում անգամ պատկերացում չունեն, որ ինքնորոշման հակամարտությունների կարգավորման ժամանակ, երբ միջնորդ կազմակերպությունը (տվյալ դեպքում՝ ԵԱՀԿ-ն)

---

[5] Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна «Истоки 44-дневной войны», www.mid.ru\ru\foreign_policy\news\\asset_publisher\cKNonkJE02Bw\content\id\4519475

[6] Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն վիճակը՝ իհարկե առանց զոհերի. Փաշինյան, 13.04.2022, https://news.am/arm/news/696384.html

պատրաստում է խնդրի լուծման փաստաթուղթը, վերջնական քայլն անում է ՄԱԿ-ը՝ որպես բարձրագույն կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպություն: Դա նշանակում է, որ այդ ժամանակ ոչ թե ԼՂ կարգավիճակի հարցը դուրս էր եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի տիրույթից, ինչպես պնդում է կառավարության ղեկավարը, այլ հակառակը՝ կարգավորման գործընթացը մոտեցել էր վերջնական շրջանին, քանի որ արդեն փաստաթղթում հիշատակվում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի մասին:

Սակայն կեղծիքն ու աճպարարությունը չեն սահմանափակվում միայն փաստաթղթերի շրջանակով: Նենգափոխվում են նաև խնդրին առնչվող փաստերը, կարգավորման սկզբունքները և անգամ «միջազգային հանրություն» հասկացությունը:

«Միջազգային հանրության» մունետիկը, Արցախի ինքնորոշումն ու Ադրբեջանի տարածքային ամբողջականության խնդիրը

Հերթական կրկնակի սուտը՝

> «Միջազգային հանրությունը բաց տեքստով խոսում է աշխարհում միակ երկիրը լինելու վտանգի մասին, որը չի ճանաչում Թուրքիայի դաշնակցի՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:»[7]
>
> «Միջազգային հանրությունը միանշանակորեն ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ակնկալում է, որ մենք էլ ճանաչենք, ակնկալում է, որ Ղարաբաղից հեռացած ադրբեջանցիները լիարժեք ներգրավված լինեն Լեռնային Ղարաբաղի ապագայի որոշման ու կառավարման հարցերում»[8]:

Նախ, անհասցե ու անանուն միջազգային հանրություն չի լինում: Միջազգային հանրություն ասելով, նկատի են ունենում ՄԱԿ-ը, որի կանոնադրությունը միջազգային իրավունքի հիմքն է, կամ այլ միջազգային կազմակերպություն, որը ՄԱԿ-ի համաձայնությամբ զբաղվում է միջազգային հարաբերություններում առկա այս կամ այն խնդրի կարգավորմամբ, ինչպես օրինակ, ԵԱՀԿ-ն՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման դեպքում: Ո՞ր միջազգային կազմակերպությունն է նման հայտարարություն արել կամ լիազորել Հայաստանի կառավարությանը՝ իր անունից նման հայտարարություն անելու: Իհարկե, ոչ մի:

---

[7] Միջազգային հանրությունն առաջարկում է «մի փոքր իջեցնել Արցախի կարգավիճակի նշածողը». Փաշինյան, https://news.am/arm/news/696362.html

[8] Հողեր չհանձնելով, փաստորեն, հազարավոր զոհերի հանգեցրած որոշումների հեղինակ դարձա. Փաշինյան, 13.04.2022, https://news.am/arm/news/696337.html

Եվ դրա կարիքն էլ չկա, քանի որ միջազգային իրավունքի վերաբերյալ տարրական գիտելիքներ ունեցող յուրաքանչյուր ոք գիտե, որ ՄԱԿ-ին կամ ԵԱՀԿ-ին անդամակցող ամեն մի երկիր, ստորագրելով այդ կազմակերպությունների կանոնադրությունները, ճանաչում է մյուս անդամ երկրների տարածքային ամբողջականությունը: Դա վերաբերում է նաև Հայաստանին ու Ադրբեջանին: Սակայն դա բացարձակապես կապ չունի Արցախի ինքնորոշման հետ, ինչը ցույց է տրվել բազմիցս:[9] Ավելին, տարածքային ամբողջականության սկզբունքը բոլորովին էլ որևէ երկրի սահմանների անձեռնմխելության կամ հավերժության մասին չէ, ինչպես փորձում են համոզել Ադրբեջանը, Թուրքիան և Հայաստանի կառավարության ղեկավարը: Դա հաստատում են միջազգային իրավունքի բազմաթիվ փաստաթղթեր, օրինակ՝ Արդարադատության միջազգային դատարանի «Կոսովոյի անկախության միակողմանի հռչակման համապատասխանությունը միջազգային իրավունքին» խորհրդատվական եզրակացությունը, որն արձանագրում է.

«80. Դատական քննության մի քանի մասնակիցներ պնդում էին, որ անկախության միակողմանի արգելքը ենթադրվում է տարածքային ամբողջականության սկզբունքից: Դատարանը հիշեցնում է, որ տաարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային իրավակարգի կարևոր մասն է և արձանագրված է ՄԱԿ-ի կանոնադրությունում, մասնավորապես, հոդված 2-ի 4-րդ կետում, որը նախատեսում է, որ «բոլոր Անդամներն իրենց միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան ուժի և դրա կիրառման սպառնալիքից՝ ընդդեմ ցանկացած Պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության կամ որևէ այլ ձևով, որը անհամատեղելի է ՄԱԿ-ի նպաատակների հետ»:

Գլխավոր ասամբլեայի 2625 (XXV) բանաձևում, որը վերնագրված է «Հռչակագիր ՄԱԿ կանոնադրության հիման վրա Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների ու համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին», որը արտացոլում է սովորական միջազգային իրավունքը (Ռազմական և կիսառազմական գործունեությունը Նիկարագուայում և Նիկարագուայի դեմ (Նիկարագուան Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմ), Գործ

[9] Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, 2008թ.: **Torosyan T.** To the Resolution of Intractable Conflicts, *Iran and Caucasus,* vol. 17, No1, 2013, pp. 120-129. **Gudelevichiute V**. Does the principle of self-determination prevail over the principle integrity? International Journal of Baltic Law, vol. 2, No 2, April, 2005, pp. 48-74. **Ryngaert C. and Sobrie S.** Recognition of States: International Law or Realpolitik? The Practice of Recognition in the Wake of Kosovo, South Ossetia, and Abkhazia. - *Leiden Journal of International Law.* No. 24. 2011, pp. 467–490.

ըստ էության, Դատական որոշում, I.C.J. Reports 1986, 101-103 էջեր, 191-193 կետեր), Գլխավոր ասամբլեան վերահաստատել է «սկզբունքը, որի համաձայն պետություններն իրենց միջազգային հարաբերություններում պետք է զերծ մնան որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժ կամ դրա կիրառման սպառնալիք օգտագործելուց»: Ապա այդ բանաձևում թվարկվում էին տարբեր պարտավորություններ, որոնք դրվում էին պետությունների վրա՝ այլ սուվերեն պետությունների տարածքային ամբողջության խախտումից խուսափելու նպատակով:

Նույն ոգով Եվրոպայում անվտանգության և համագործակցության հելսինկյան կոնֆերանսի 1975թ. օգոստոսի 1-ի եզրափակիչ ակտը նախատեսում է, որ «մասնակից Պետությունները կհարգեն մասնակից Պետություններից յուրաքանչյուրի տարածքային ամբողջականությունը»:

Այսպիսով, տարածքային ամբողջականության սկզբունքը սահմանափակվում է Պետությունների միջև հարաբերություններով (*ընդգծումը իմն է- Տ.Թ.*)»[10]:

Ակնհայտ է, որ խոսքը ոչ թե ընդհանրապես ՄԱԿ անդամ երկրի տարածքի անձեռնմխելիության մասին է, այլ ՄԱԿ այլ անդամների կողմից այդ տարածքի նկատմամբ սպառնալիքի կամ ագրեսիայի անթույլատրելիության:

Հայաստանի կառավարության ղեկավարը սեփական երկրի տարածքային ամբողջականության մասին խոսելու փոխարեն, որը բացահայտորեն խախտել է Ադրբեջանը, խոսում է այդ երկրի տարածքային ամբողջականության մասին՝ իր պետությանը հանիրավի մեղադրելով այն խախտելու մեջ: Ավելին, նա իրեն իրավունք է վերապահում «միջազգային հանրության» (*ո՞ր – Տ.Թ.*) անունից սպառնալ Հայաստանին ու Արցախին.

> «Միջազգային հանրությունը երբեմն հստակ, երբեմն դիվանագիտական եղանակով ասում է, որ պաշտոնական Երևանի այդ դիրքորոշումը մեծ վտանգ է ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի համար:»[11]

Քիչ անց ակնհայտ է դառնում, որ այդ ամենի նպատակը սեփական հրեշավոր գաղափարները աբստրակտ միջազգային հանրությանը վերագրելն էր.

[10]Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory opinion, 22nd July 2010, https://www.icj-cij.org/en/case/141

[11]Նույն տեղում:

«Այսօր միջազգային հանրությունը մեզ ասում է. մի փոքր իջեցրեք ձեր սահմանած նշաձողը Արցախի հարցում, և դուք կունենաք ավելի մեծ միջազգային կոնսոլիդացիա»[12]:

Այս ձևակերպման հեղինակը հավանաբար չի նկատել, որ անուղղակիորեն, սակայն միանշանակորեն բացահայտում է երկու կարևոր իրողություն: Առաջին՝ քանի որ Արցախյան առաջին (90-ականների սկզբի) պատերազմից հետո Ադրբեջանն ու Թուրքիան են շարունակաբար առաջարկել Արցախի ինքնավարության ցանկացած կարգավիճակ Ադրբեջանի կազմում, ապա այլ կարծիք լինել չի կարող, որ այս, ինչպես նաև այլ հատվածներում «միջազգային հանրություն» ասելով նկատի է առնվել Ադրբեջանին ու Թուրքիային: Երկրորդ՝ նշաձողի «մի փոքր» իջեցումն էլ ոչ այլ ինչ է, քան ինքնավարությունն Ադրբեջանի կազմում: Միջազգային իրավունքն այլ կարգավիճակ չի սահմանում, որը գտնվում է անկախության և ինքնավարության միջև: Ադրբեջանից ու Թուրքիայից բացի, երբեք որևէ մեկն իրեն իրավունք չի վերապահել նման անպարկեշտ առաջարկ անելու, քանի որ, ի տարբերություն ոմանց, շատերը հիանալի գիտեն, որ միջազգային իրավունքը հստակ սահմանում է, թե ինչ է նշանակում ինքնորոշման իրավունքի իրացում.

«Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միացումը կամ դրա հետ միավորումը կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի հաստատումը, որն ազատորեն ընտրել է ժողովուրդը, այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ձևերն են»:[13]

2007թ.-ից սկսած, երբ Մինսկի խմբի համանախագահները քննարկման ներկայացրին «Մադրիդյան սկզբունքները», որոնք հետագայում հակամարտության կողմերը ընդունեցին որպես դրա կարգավորման հիմք, միջազգային հանրությունը (ի դեմս ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և այլոց) Արցախի կարգավիճակի որոշման մեկ սկզբունք է արձանագրել՝ ինքնորոշման իրավունքի կիրառումը[14], հետագայում բազմիցս, այդ թվում և 2020թ. պատերազմից հետո վերահաստատելով այդ դիրքորոշումը[15]:

---

[12] Նույն տեղում:

[13] Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United, A/RES/2625 (XXV) 24 Oct. 1970. https://undocs.org/en/A/RES/2625(XXV)

[14] Թորոսյան Տ., ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573ԼՂԳործընթաց.pdf

[15] Թորոսյան Տ., Դիվանագիտական լուծում կա. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորություններն ու հեռանկարները 2020թ. պատերազմից հետո, https://luys.am/img/artpic/small/ca628a9162b4fa5916e3Դիվանագիտականլուծումկա.pdf

Մեկ այլ լուրջ խնդիր է այն, որ կառավարության ղեկավարը «մտահոգ է» Լեռնային Ղարաբաղից հեռացած ադրբեջանցիների հարցերով՝ կրկին հանդես գալով «միջազգային հանրության» (Թուրքիայի և Ադրբեջանի) մունետիկի դերում: Հատկանշական է, որ նա երբեք չի հիշատակում Ադրբեջանից դուրս մղված 400000-ից ավելի հայ փախստականների մասին, որոնք զոհ դարձան բռնությունների ու էթնիկ զտումների: Նրանց մոռացության տալը ոչ միայն անբարոյականություն է, այլև լուրջ ռազմավարական սխալ Արցախի խնդրի կարգավորման գործընթացում: Տարրական գիտելիքներ ու խնդրի իրական լուծման ցանկություն ունեցողները գիտեն, որ արդի հակամարտությունների կարգավորման գործընթացում երկկողմանի փախստականների առկայության դեպքում իրական և հետագայի համար անվտանգ լուծումը ոչ թե այդ փախստականների մեխանիկական վերադարձն է՝ հետագայում նոր հակամարտության նախադրյալներ ստեղծելով, այլ համարժեք փոխանակումը: Ակնհայտ է, որ նման հարցադրման շրջանակներում ոչ միայն Արցախ, այլև Հայաստանի Հանրապետություն որևէ ադրբեջանցու վերադարձի մասին խոսք լինել չի կարող, քանի որ Ադրբեջանից հայ փախստականների թիվը մի քանի անգամ ավելի մեծ է, եթե անգամ Արցախից ու Հայաստանից հեռացած ադրբեջանցիների թվերը գումարվեն:

Հավանաբար, վստահ չլինելով, որ ոխերիմ «հարևաններին» «միջազգային հանրություն» ձևակերպմամբ պատվելն ու ադրբեջանցի փախստականների հարցերով «մտահոգությունը» լուրջ կընդունվի խորհրդարանական մեծամասնության լսարանից դուրս, այդ քաղաքական ուժի ղեկավարը դիմում է հերթական կեղծիքի, որը կներկայացվի ստորև:

Ադրբեջանի համաձայնությունը խնդրի լուծմանը

Հավանաբար նա համարում է, որ Արցախի ինքնավարությունն Ադրբեջանի կազմում Բաքվի ողորմածությունն է և հայտարարում է.

«Միշտ հաշվի առեք, որ հարց է՝ Ադրբեջանը այս ամեն ինչի հետ համաձայն է, թե ոչ»[16]:

Սա տգիտության կամ կեղծիքի աղաղակող դրսևորում է: Կարո՞ղ է որևէ մեկը մատնանշել միջազգային իրավունքի գեթ մեկ փաստաթուղթ, որը մետրոպոլիային՝ ի դեմս Ադրբեջանի, օժտում է ինքնորոշվող կողմի կարգավիճակին համաձայն լինելու իրավունքով: Ոչ միայն նման փաստաթուղթ գոյություն չունի, այլև, ինչպես ՄԱԿ-ի՝

[16] Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն վիճակը՝ իհարկե առանց զոհերի. Փաշինյան, https://news.am/arm/news/696384.html

կոդիֆիկացիոն բնույթի A/RES/2625 (XXV) հռչակագրից վերը բերված մեջբերումն է ակնհայտորեն վկայում, ճիշտ հակառակն է՝ ինքնորոշվող ժողովրդի բացառիկ ու անվերապահ իրավունքն է իր կարգավիճակի որոշումը: Չկա գեթ մեկ դեպք, երբ ինքնորոշման հակամարտության լուծումը՝ ինքնորոշվող կողմի անկախության ճանաչումը, իրականացվել է մետրոպոլիայի համաձայնությամբ: Դա են հաստատում, օրինակ, վերջին տասնամյակների բոլոր՝ Արևելյան Թիմորի, Հարավային Սուդանի, Էրիթրեայի, Կոսովոյի դեպքերը: Բոլոր լուծումները իրականացվել են իրական միջազգային հանրության՝ ՄԱԿ-ի որոշումներով, թեև մետրոպոլիաները ընդվզել են դրա դեմ: Իսկ երբ, օրինակ, Ինդոնեզիան փորձել է ռազմական ուժով խոչընդոտել Արևելյան Թիմորում անկախության հանրաքվեի անցկացումը, ՄԱԿ-ը սպառնացել է Ինդոնեզիային ճանաչել որպես ցեղասպան երկիր՝ ճնշելով Ջակարտայի ռազմատենչ նկրտումները: Սակայն, պետք է հաշվի առնել, որ ինքնորոշման իրավունքի իրացումը ենթադրում է ծանր և ամենօրյա քրտնաջան աշխատանք բոլոր ուղղություններով: Ակնկալիքները, հաճախ նաև պահանջները, որոնք պարբերաբարհայ իրականությունում ուղղվում են միջազգային հանրությանը, չեն կարող իրականանալ առանց այդ աշխատանքի: Իսկ Հայաստանի կառավարության նման աշխատանքն իսպառ բացակայում է, թեև 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքում արձանագրվել են միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ՝ մետրոպոլիայի և ՄԱԿ-ի անդամ այլ երկրի ռազմական ագրեսիա ինքնորոշվող ժողովրդի նկատմամբ, ահաբեկչական խմբավորումների ներգրավում, արգելված զինատեսակների կիրառում, քաղաքացիական և կրոնական նշանակության շինությունների թիրախավորված ռմբահարումներ և այլն: Մինչդեռ կառավարությունն ընտրել է այլ նպատակ ու մարտավարություն՝ հայց է ներկայացրել Արդարադատության միջազգային դատարան Հայաստանի Հանրապետության և Արցախի համար անպտուղ ու վնասակար ձևակերպմամբ՝ նպաստելով Ադրբեջանի կազմում Արցախի կարգավիճակի իրականացմանը:

Արդարադատության միջազգային դատարան ներկայացված հայցի էությունն ու վնասները

Կառավարության ղեկավարն այդ հարցի վերաբերյալ ներկայացրել է հետևյալը.

«Ինչպես սահմանագծման դեպքում, ԼՂ կարգավիճակի հարցում էլ մեզ համար չափազանց կարևոր է հայաստանյան դիրքորոշումների միջազգային լեգիտիմության ամրապնդումը, ու այս առումով էական է այն դատական հայցի հանգուցալուծումը, որը Հայաստանը 2021թ. սեպտեմբերի 16-ին ներկայացրել է ընդդեմ Ադրբեջանի

Արդարադատության միջազգային դատարան: Հայցը հիմնված է ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի վրա, և մենք հույս ունենք, որ հայցի հանգուցալուծումը, որը, ցավոք, շատ արագ չի լինի, էական գործոն կդառնա ԼՂ հայության իրավունքների պաշտպանության ոլորտում և կբարձրացնի ԼՂ կարգավիճակի մասին միջազգային հանրության ունեցած պատկերացումների նշաձողը: Բայց այսօր էլ պետք է ընդգծենք, որ Ադրբեջանն իր գործողություններով ավելի ու ավելի հիմնավոր է դարձնում այդ երկրին՝ ազգային ատելության քաղաքականություն վարելու մեջ մեղադրող մեր հայցը»[17]:

Հավանաբար «հայաստանյան դիրքորոշումների» ներքո նկատի է առնված ներկայիս իշխանությունների դիրքորոշումը, որի «միջազգային լեգիտիմացումը» ԼՂ կարգավիճակի հարցում կարող է ունենալ ծանր հետևանքներ, քանի որ, ինչպես ցույց տրվեց վերևում, այդ դիրքորոշման համաձայն կարգավիճակը պետք է լինի անկախությունից «մի փոքր ցածր»: Դա ևս մեկ անգամ հաստատում է հաջորդ մեջբերումը.

«Եթե նախկինում մենք հիմքում դնում էինք Ղարաբաղի կարգավիճակը՝ դրանից բխեցնելով անվտանգության երաշխիքներն ու իրավունքները, այժմ հիմքում դնում ենք անվտանգության երաշխիքներն ու իրավունքները՝ դրանից բխեցնելով կարգավիճակը: Այլ կերպ ասած՝ մենք արձանագրում ենք, որ կարգավիճակը տվյալ իրադրության մեջ ոչ թե նպատակ է, այլ միջոց ապահովելու ԼՂ հայության անվտանգությունն ու իրավունքները»[18]:

Այս ձևակերպման քողազերծված իմաստն արտահայտում է վերջին նախադասությունը, համաձայն որի Արցախի կարգավիճակը պետք է բխի արցախահայության անվտանգությունից և իրավունքներից: Ակնհայտ է, որ դա հիմնախնդրի արմատական նենգափոխումն է՝ այն տեղափոխելով մարդու իրավունքների հարթություն: Պատահական չէ, որ իրավունք բառն օգտագործված է հոգնակի՝ մարդու իրավունքներին համապատասխան, այլ ոչ թե եզակի՝ որպես ինքնորոշման իրավունք: Ակնհայտ է, որ դա ուղիղ ճանապարհ է դեպի Արցախի հայաթափում: Մի՞թե որևէ ողջամիտ մարդ կարող է պատկերացնել, որ 2020թ. ագրեսիայի և դրա ընթացքում պատերազմական հանցագործություններ կատարած

[17] Նույն տեղում:

[18] Եթե նախկինում հիմքում դնում էինք Ղարաբաղի կարգավիճակը, այժմ՝ անվտանգության երաշխիքներն ու իրավունքները. Փաշինյան, https://news.am/arm/news/696359.html

ոճրագործը կարող է ապահովել Արցախի անվտանգությունը: Ավելին, այդ ագրեսիան վկայեց, որ անգամ միջազգային արձագանքը չի կարող ապահովել այդ անվտանգությունը: Այլ ինքնորոշման հակամարտություններում ռազմական գործողությունների վերսկսումը բոլոր դեպքերում հանգեցրել է ինքնորոշվող կողմի անկախության ճանաչմանը, իհարկե՝ այդ կողմի ակտիվ աշխատանքի պայմաններում:

Անդրադառնալով Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կիառման (Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի) հայցին՝ կառավարության ղեկավարը կրկին դիմել է աճպարարության ու բացահայտ կեղծիքի՝ իբր Արդարադատության միջազգային դատարան (հետագայում՝ Դատարան) 2021թ. սեպտեմբերին 16-ին ներկայացված հայցի հանգուցալուծումը «կբարձրացնի ԼՂ կարգավիճակի մասին միջազգային հանրության ունեցած պատկերացումների նշաձողը»: Հայցի ձևակերպումն ու դրա վերաբերյալ առաջին զարգացումներն արդեն իսկ վկայում են դա: Արդեն սեպտեմբերի 23-ին նույնպիսի հայցով՝ ընդդեմ Հայաստանի, Ադրբեջանն է դիմել Դատարան: Միաժամանակ, երկու հայցով էլ կողմերը Դատարանին խնդրել են կիրառել ժամանակավոր միջոցառումներ՝ մինչև վերջնական վճիռը: Այդ խնդրանքներին ի պատասխան՝ Դատարանը հրապարակել է իր արձագանքներն ինչպես Հայաստանի խնդրանքին[19], այնպես էլ Ադրբեջանի[20]: Առաջինի III բաժնում, որը կոչվում է «Իրավունքներ, որոնց պաշտպանությունը հայցվում է և այդ իրավունքների ու հայցվող միջոցների կապը (44-68 կետեր)», Դատարանն արձանագրում է, որ.

> «Կոնվենցիայի 2, 3, 4, 5, 6, 7-րդ հոդվածները նախատեսված են առանձին անձանց ռասայական խտրականությունից պաշտպանելու համար...
>
> Դատարանը նշում է, որ Հայաստանը պաշտպանում է երկու իրավունքներ՝ գերիների հայրենիք վերադարձվելու իրավունք և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանության իրավունք»[21]:

---

[19]Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) Request for the indication of provisional measures, https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-SUM-01-00-EN.pdf

[20] Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Azerbaijan v. Armenia) Request for the indication of provisional measures, https://www.icj-cij.org/public/files/case-related/181/181-20211207-SUM-01-00-EN.pdf

[21] Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) Request for the indication of provisional measures, https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-SUM-01-00-EN.pdf

Ակնհայտ է, որ.

1. Կոնվենցիան նախատեսված է առանձին անձանց իրավունքների պաշտպանության համար և որևէ առնչություն չունի ինքնորոշման իրավունքի ու Արցախի կարգավիճակի հետ:

2. Հայցը վերաբերում է 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքում գերեվարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներին:

Ավելին, Արդարադատության միջազգային դատարանում ինքնորոշմանը վերաբերող գործերը երբեք չեն քննարկվել և չէին էլ կարող քննարկվել այդ Կոնվենցիայի խախտման տեսակետից:

Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը պետք է հետամուտ լինի իր քաղաքացիների՝ այդ թվում և գերեվարված, իրավունքների պաշտպանությանը (թեև այդ առումով ևս ներկայացված հայցը որևէ դրական արդյունք ակնկալելու հիմք չէ, ինչը այլ քննարկման առարկա է), սակայն դա ներկայացնելը որպես Արցախի կարգավիճակի ուղղությամբ արվող քայլ՝ մոլորեցնելով գործընթացին անտեղյակ քաղաքացիներին, անբարոյականություն է: Թեև կեղծիքի, աճպարարության ու հարցերի և իրողությունների նենգափոխման գործելաոճը կառավարության ղեկավարը կիրառում է ցանկացած խնդրի հետ կապված[22], այդ թվում և այսպես կոչված խաղաղության պայմանագրի, որի առնչությամբ կառավարության ղեկավարի մոտեցումները կդիտարկվեն ստորև:

Խաղաղության պայմանագիր. Ադրբեջանի առաջարկները դրա վերաբերյալ և Հայաստանի լիազորությունները Արցախի հետ կապված

Միջազգային հարաբերություններում հանրահայտ փաստ է, որ խաղաղությունը, որը, բնականաբար, հաջորդում է պատերազմին, հաստատվում է երկու տարբերակներից որևէ մեկով՝ կա՛մ երկու կողմերի համաձայնությամբ, կա՛մ կողմերից մեկի պարտադրանքով, երբ մյուս կողմը հետագա կորուստներից խուսափելու այլ ելք չունի: Հետևաբար, քանի որ խաղաղության հաստատումը երկկողմ գործընթաց է, նախ պետք է պարզել, թե տվյալ դեպքը նշված տարբերակներից որին է վերաբերում, քանի որ դատարկ հայտարարությունները՝ «թևակոխում ենք խաղաղության դարաշրջան», «խաղաղության օրակարգը

[22]Թորոսյան Տ., 2020թ. պատերազմը. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, 09.03.2021, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

այլընտրանք չունի մեզ համար»[23] և այլն, ոչ միայն չեն կարող ապահովել իրական խաղաղություն, այլև խիստ վտանգավոր են և ստեղծում են նոր կորուստներով հղի կեղծ իրավիճակներ: 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքում ոչ թե ստեղծվել է վերոհիշյալ երկու իրավիճակներից որևէ մեկը, այլ տեղի է ունեցել կապիտուլյացիա, աղետ: Կոչերը՝ ուղղված իրավիճակին նման ձևակերպում չտալուն, սին են ու իրականությունից խուսափելու անօգուտ ու վտանգավոր փորձեր, քանի որ նման ձևակերպումներով օտարերկրյա հրապարակումները բազմաթիվ են թե՛ լրատվամիջոցների, թե՛ մասնագիտական մակարդակով: Հետևաբար, ներկայումս հայկական կողմից խաղաղության պայմանագրի վերաբերյալ հայտարարությունները կեղծ են ու վտանգավոր, մինչդեռ Ադրբեջանը փորձում է 2020թ. նոյեմբերի 9-ից հետո ստեղծված իրավիճակից «քամել» առավելագույնը:

Հարկ է նաև անդրադառնալ Ադրբեջանի առաջարկություններին, որոնց հիման վրա, ըստ Բաքվի, պետք է կառուցվի «խաղաղության պայմանագիրը»: Հայաստանի կառավարության ղեկավար ներկայացրել է.

> «Հայաստանին փոխանցված են Ադրբեջանի պատկերացումները խաղաղության պայմանագրի հիմնարար սկզբունքների վերաբերյալ: Մենք օպերատիվ ձևով քննարկել ենք այդ առաջարկություններն ու արձանագրել, որ Հայաստանի համար դրանցում անընդունելի ոչինչ չկա: Այդ սկզբունքները հետևյալն են.
>
> - փոխադարձաբար միմյանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիության, քաղաքական անկախության ճանաչում և հարգում,
> - միմյանց նկատմամբ տարածքային պահանջների բացակայության արձանագրում և դե յուրե պարտավորությունների արձանագրում ապագայում միմյանց նկատմամբ նման պահանջներ չառաջադրելու վերաբերյալ,
> - միջպետական հարաբերություններում միմյանց անվտանգության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության համար, այդ թվում՝ ուժի կիրառման սպառնալիքներ չստեղծելու, ՄԱԿ-ի նպատակներին չհամապատասխանող գործողություններ չձեռնարկելու փոխադարձ պարտավորություն,

[23] Միջազգային հանրությունն առաջարկում է «մի փոքր իջեցնել Արցախի կարգավիճակի նշաձողը». Փաշինյան, https://news.am/arm/news/696362.html

- սահմանների դելիմիտացիա և դեմարկացիա և դիվանագիտական հարաբերությունների հաստատում,
- տրանսպորտային և այլ կոմունիկացիաների ապաշրջափակում, նոր կոմունիկացիաների ստեղծում, և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցություն…»[24]:

Թվում է, որ սկզբունքորեն Ադրբեջանի առաջարկությունների մեջ ոչ մի արտառոց բան չկա: Սակայն կան մանրամասներ, որոնց թյուրըմբռնումը կարող է խնդիրներ առաջացնել:

Նախ՝ ընդհանուր դիտարկում: Ադրբեջանի առաջարկությունների իրական լինելը կարող են հավաստել միայն այդ երկրի քայլերը՝ ուղղված նշված սկզբունքների հարգմանը Հայաստանի հետ հարաբերություններում: Օրինակ, Հայաստանի տարածքային ամբողջականության բազմաթիվ խախտումները Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում և այլն վկայում են Հայաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ մտադրությունների ու ոտնձգությունների մասին: Հետևաբար, Ադրբեջանը նախ պետք է իր զինված ստորաբաժանումները դուրս բերի Հայաստանի տարածքից, ապա նոր հավակնի փոխադարձ հարգանքի մասին համաձայնության կնքմանը:

Տարածքային ամբողջականության սկզբունքի առնչությամբ ձևավորվել է մի թյուրըմբռնում, որը հաճախ տեղ է գտնում նաև Հայաստանի ընդդիմության (այդ թվում՝ նաև խորհրդարանական) որոշ ներկայացուցիչների խոսքում: Հայտարարվում է, որ եթե Հայաստանը ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա դա նշանակում է՝ ընդունում է, որ Արցախը պետք է լինի Ադրբեջանի կազմում: Միջազգային իրավունքի տեսակետից անհեթեթություն է տարածքային ամբողջականությունը ինքնորոշման իրավունքին հակադրելը: Որ Արցախի համար՝ որպես հակամարտության լուծում, ըստ միջազգային իրավունքի, պետք է կիրառվի ինքնորոշման իրավունքը, բազմիցս արձանագրվել է Մինսկի խմբի և ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, ԵԽ փաստաթղթերում, որոնք նշել են, որ հակամարտությունը պետք է կարգավորվի Մինսկի խմբի մշակած «Մադրիդյան սկզբունքների» հիման վրա, որը հակամարտության բոլոր կողմերն ընդունել են որպես դրա լուծման հիմք: Այդ փաստաթղթի հիմքում միջազգային իրավունքի երեք սկզբունքներն են, որոնցից մեկը՝ ինքնորոշման սկզբունքն է, որի հիման վրա պետք է կարգավորվեն Արցախի և Ադրբեջանի հարաբերությունները, մյուսը՝ տարածքային ամբողջականության

[24]Եթե նախկինում հիմքում դնում էինք Ղարաբաղի կարգավիճակը, այժմ՝ անվտանգության երաշխիքներն ու իրավունքները. Փաշինյան, https://news.am/arm/news/696359.html

սկզբունքը, որի հիման վրա պետք է կարգավորվեն Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները՝ որպես ՄԱԿ-ի անդամ երկրներ: Թերևս հարկ կա ևս մեկ անգամ հիշեցնելու միջազգային իրավունքում առկա, մասնագիտական գրականությունում և Արդարադատության միջազգային դատարանի որոշումներում բազմիցս մատնանշած անառարկելի փաստը. տարածքային ամբողջականության սկզբունքը նախատեսված է ՄԱԿ անդամ պետությունների (օրինակ՝ Հայաստանի և Ադրբեջանի) միջև առկա հարաբերությունները կարգավորելու համար և որևէ կապ չունի ինքնորոշման իրավունքի (սկզբունքի) հետ, որը կիրառվում է ինքնորոշվող ժողովրդի և ՄԱԿ-ի այն անդամ պետության միջև հարաբերությունների կարգավորման համար, որից ինքնորոշվող կողմը անջատվում է:[25]

Նաև դա է պատճառը, որ Ադրբեջանը փորձել է «խաղաղության պայմանագրին» առնչվող առաջարկությունները ձևակերպելիս դիմել մանր խուլիգանության: Միջազգային իրավունքում հայտնի և միջպետական հարաբերությունների կարգավորման համար կիրառվող մի քանի սկզբունքների մեջ խցկել է «միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիություն» արտահայտությունը: Միջազգային իրավունքի ո՞ր փաստաթղթով է այն սահմանվում: Ոչ մի. նման նորմ գոյություն չունի: Եթե Ադրբեջանը մատնացույց անի Հելսինկյան եզրափակիչ ակտի երրորդ սկզբունքը, ապա այնտեղ «միջազգայնորեն ճանաչված» բառակապակցություն չկա.

> «III. Սահմանների անխախտելիություն
>
> Մասնակից պետությունները միմյանց բոլոր սահմանները, ինչպես նաև Եվրոպայի բոլոր պետությունների սահմանները համարում են անձեռնմխելի և այդ պատճառով նրանք այժմ և հետագայում ձեռնպահ կմնան այդ սահմանների նկատմամբ ոտնձգություններից:
>
> Համապատասխանաբար, նրանք զերծ կմնան ցանկացած անդամ պետության նկատմամբ նրա տարածքի կամ դրա մի մասի գրավման կամ պահանջի գործողություններից»[26]:

Հեշտ է նկատել, որ այս սկզբունքը ևս, ինչպես տարածքային ամբողջականության սկզբունքը, կիրառվում է մասնակից (անդամ) պետությունների միջև հարաբերությունների կարգավորման նպատակով և ոչ մի առնչություն չունի ինքնորոշման իրավունքի հետ: Եվս մեկ անգամ պետք է արձանագրել, որ

---

[25] Եթե նախկինում հիմքում դնում էինք Ղարաբաղի կարգավիճակը, այժմ՝ անվտանգության երաշխիքներն ու իրավունքները. Փաշինյան, https://news.am/arm/news/696359.html

[26] CONFERENCE ON SECURITY AND CO-OPERATION IN EUROPE FINAL ACT, https://www.osce.org/files/f/documents/5/c/39501.pdf

միջազգային իրավունքը տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները սահմանում է միայն որպես **ՄԱԿ անդամ պետության համար արգելք՝ ՄԱԿ մեկ այլ անդամ պետության տարածքի** որևէ մաս ռազմական ճանապարհով անջատելու և իր տարածքին միացնելու համար: Ինքնորոշման իրավունքի կոռեկտ կիրառման ճանապարհով ինքնորոշվող կողմի անջատման համար միջազգային իրավունքը որևէ արգելք չի սահմանում, բացի ինքնորոշվող կողմի ռազմական ագրեսիան:[27]

Արդյո՞ք Հայաստանի կառավարությունը չի նկատել այս ամենը: Ավելի մեծ հիմքեր կան պնդելու, որ կիսում է Արցախի կարգավիճակի վերաբերյալ Ադրբեջանի պատկերացումները, քանի որ հետևյալ հատվածով հենց դա է վկայում կառավարության ղեկավարի խոսքը.

> «Հայաստանը երբեք Ադրբեջանից տարածքային պահանջներ չի ունեցել, և Ղարաբաղի հարցը ոչ թե տարածքի, այլ իրավունքի հարց է: Հետևաբար, մենք արձանագրել ենք, որ Հայաստանի համար սկզբունքային նշանակություն ունեն Ղարաբաղի հայության անվտանգության երաշխիքները, նրանց իրավունքների և կարգավիճակի հստակեցումը: Եվ հետևաբար, օրակարգի այս լրացումով, Հայաստանը պատրաստ է խաղաղության բանակցությունների մեկնարկին և այս դիրքորոշումն արձանագրվել է Բրյուսելում վերջին հանդիպման ընթացքում»[28]:

Թեև առաջին նախադասությամբ արձանագրված է հանրահայտ իրողություն, որ Հայաստանը երբեք տարածքային պահանջներ չի ունեցել, սակայն տարօրինակ է, որ դա ասում է մեկը, ով մի քանի նախադասություն այն կողմ «միջազգային հանրության» անունից սպառնում է Հայաստանին և մեղադրում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը չճանաչելու մեջ: Սակայն առաջինի համեմատ 180 աստիճանով շրջված երկրորդ նախադասությունը վկայում է, որ «կարմիր կովը կաշին չի փոխի»: «Հայաստանի (մոռացել է ավելացնել «կառավարության» բառը - *Տ.Թ.*») համար սկզբունքային նշանակություն ունեն Ղարաբաղի հայության անվտանգության երաշխիքները, նրանց իրավունքների և կարգավիճակի հստակեցումը» նախադասությունը, չնայած աճպարարության ու նենգափոխման փորձերին,

---

[27] Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United, A/RES/2625 (XXV) 24 Oct. 1970. https://undocs.org/en/A/RES/2625(XXV)

[28] Եթե նախկինում հիմքում դնում էինք Ղարաբաղի կարգավիճակը, այժմ՝ անվտանգության երաշխիքներն ու իրավունքները. Փաշինյան, https://news.am/arm/news/696359.html

բացահայտում է իրական մտադրությունները: Նման հստակեցում Ադրբեջանի հետ հնարավոր է անել միայն այն դեպքում, երբ Արցախը վերադարձվի Ադրբեջանի կազմ, որովհետև անկախ Արցախի քաղաքացիների անկախությունն ու իրավունքները պետք է ապահովի ԼՂՀ ղեկավարությունը: «Կարգավիճակի հստակեցում» բառակապակցությունը ոչինչ չի փոխում, քանի որ նախադասության առաջին մասի հետ դա կարող է նշանակել առավելագույնը ինքնավարություն:

Հայաստանի կառավարությունը բարոյական, քաղաքական և առավել ևս իրավական ոչ մի հիմք չունի Ադրբեջանի հետ Արցախին վերաբերող որևէ հարց քննարկելու համար, քանի որ, ինչպես վերը անհերքելիորեն ցույց տրվեց, Արցախի կարգավիճակի որոշման լիազորություն ունի միայն Արցախի ժողովուրդը: Ո՛չ ազդեցիկ պետությունները, ո՛չ Թուրքիայի, Ադրբեջանի ու Հայաստանի կառավարությունները նման լիազորություն չունեն, ու նման ամեն փորձ միջազգային իրավունքի կոպիտ խախտում է՝ ուղղված Արցախի ժողովրդի իրավունքների դեմ:

Հատկանշական է, որ 2022թ. ապրիլի 13-14-ին Ազգային ժողովում 2021թ. բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ կառավարության ղեկավարի ելույթի և հարցուպատասխանի ընթացքում ԼՂ հակամարտությանը նվիրված հատվածի գլխավոր «գաղափարները»՝ քողարկված կեղծիքներով, աճպարարությամբ ու նենգափոխումներով, ուղղված են Արցախը Ադրբեջանի կազմ վերադարձնելուն և արմատապես տարբերվում են ոչ միայն կառավարության գործունեության այդ տարվա, այլև նախորդ տարիների բյուջեների մասին օրենքների փաթեթների, այլև 2021թ. արտահերթ ընտրություններում իշխող քաղաքական ուժի ներկայացրած ընտրական ծրագրի՝ Արցախի խնդրին վերաբերող հատվածների մոտեցումներից ու սկզբունքներից: Ակնհայտ է, որ տեղի է ունենում ինչպես միջազգային իրավունքի հիմնական գաղափարներից մեկի՝ ինքնորոշման իրավունքի ու դրանից բխող նորմերի կոպիտ ոտնահարում, այնպես էլ ՀՀ սահմանադրության և օրենքների կոպիտ ոտնահարումներ:

Հետևաբար, Հայաստանի կառավարության ղեկավարի վերոհիշյալ ելույթի միակ հատվածը, որի հետ անվերապահորեն կարելի է համաձայնել, այդ ելույթում հնչեցրած սեփական գործունեության գնահատականն է:

Խոստովանություն

Հետաքրքիր է սեփական մեղքի գիտակցման և խոստովանության դինամիկան:

Փորձ է արվել հարցը փակել փոքր խոստովանությամբ. «Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն այս վիճակը, իհարկե, առանց

զոհերի»[29]: Սակայն ակնհայտ է, որ պնդումը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը, քանի որ իրականում ոչ միայն պատերազմը չի կանխվել, այլև արվել են քայլեր, որոնք նախադրյալներ են ստեղծել ու պատրվակ դարձել պատերազմի սկսման համար (կարգավորման գործընթացը 0-ական կետից սկսելու մասին հայտարարությունը, բանակցային գործընթացի խափանումը և այլն[30]): Դրա մեկ դրվագի մասին նույն ելույթում նշել է ինքը՝ Փաշինյանը. «2019 թվականին մենք բանակցություն նույնիսկ սկսած էլ չենք եղել, բովանդակային բանակցությունների մասին չենք խոսել ընդհանրապես»[31]:

Ինչ վերաբերում է «կլիներ նույն իրավիճակը» արտահայտությանը, ապա այն ևս հիմնովին սխալ է: Եթե խնդիրը կարգավորվեր «Մադրիդյան սկզբունքների»՝ Մինսկի խմբի նախագծի հիման վրա, իհարկե, շրջանների վերադարձի խնդիրը ծագելու էր, քանի որ, եթե միջազգային իրավունքի հիման վրա Արցախն ունի ինքնորոշման իրավունք, և դրա հիման վրա պետք է լուծվեր կարգավիճակի հարցը, ապա նույն միջազգային իրավունքի հիման վրա շրջանների վերադարձի խնդիրը նույնպես պետք է լուծվեր: Բայց ոչ այնպես, ինչպես ընկալել էր Հայաստանի կառավարության ղեկավարը.

> «Ես, այո, ուզում եմ խոստովանել, որ հնարավոր է, որ մեղավոր եմ դրանում: Մեղավոր եմ, որ 2018-2019 թվականներին մեր հանրության առաջ չեմ կանգնել ու չեմ բարձրաձայնել, որ մեր բոլոր հեռու և մոտիկ բարեկամները մեզնից ակնկալում են, որ մենք այս կամ այն կոնֆիգուրացիայով Ադրբեջանին հանձնենք յոթ հայտնի շրջանները և իջեցնենք Արցախի կարգավիճակի համար մեր սահմանած նշաձողը»[32]:

Անմիջապես աչք է ծակում կենցաղային մոտեցումը հարցին: Նախ, այս խնդրի կապակցությամբ էական նշանակություն ուներ Մինսկի խմբի համանախագահների դիրքորոշումը, որը ամրագրված է փաստաթղթերով: Որևէ մեկը չի կարողացել մատնացույց անել որևէ փաստաթուղթ, որը նախատեսում էր իջեցնել «կարգավիճակի համար մեր նշաձողը»: Ճիշտ հակառակը: Ինչպես վերը ցույց է տրվել, ռուսաստանցի

---

[29] Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն վիճակը՝ իհարկե առանց զոհերի. Փաշինյան, https://news.am/arm/news/696384.html

[30] Թորոսյան Տ., 2020թ. պատերազմը. Նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, 09.03.2021, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

[31] Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն վիճակը՝ իհարկե առանց զոհերի. Փաշինյան, https://news.am/arm/news/696384.html

[32] Հողեր չհանձնելով, փաստորեն, հազարավոր զոհերի հանգեցրած որոշումների հեղինակ դարձա. Փաշինյան, 13.04.2022, https://news.am/arm/news/696337.html

համանախագահ Ի. Պոպովը, ներկայացնելով 2019թ. նախագիծը, ապացուցել է կարգավիճակի մասին կառավարության ղեկավարի հոդվածում և դիտարկվող ելույթում պնդումների ստահոդ լինելը: Այդ պարագայում անիմաստ է քննարկելը, թե ովքեր են վերջինիս խորհրդավոր «հեռու և մոտիկ բարեկամները»: Ինչ վերաբերում է «այս կամ այն կոնֆիգուրացիայով Ադրբեջանին յոթ հայտնի շրջանները» հանձնելուն, ապա դա առանցքային նշանակություն ուներ կարգավորման սխեմայում: Ըստ Մինսկի խմբի, ստորագրվում էր փաթեթային փաստաթուղթ ԼՂ հակամարտության լուծման վերաբերյալ, որտեղ արձանագրվում էին բոլոր քայլերը: Այդ քայլերի իրականացումը պետք է տեղի ունենար աստիճանաբար: Նախ պետք է հանձնվեին 5 շրջանները, ինչը պետք է իրականացվեր տևական ժամանակահատվածում, քանի որ պետք է ձևավորվեին նոր բաժանարար գծեր, կահավորվեին նոր դիրքեր և այլն: Հաջորդ քայլով պետք է Արցախում նախապատրաստվեր և անցկացվեր անկախության հանրաքվե, որին կարող էին մասնակցել նաև Արցախից հեռացած ադրբեջանցիները, սակայն ոչ ավելի, քան արցախահայության 25 տոկոսի ձայների չափով: Դրան զուգահեռ պետք է որոշվեր Լաչինի և Քելբաջարի շրջանների բաշխումը, քանի որ նախատեսվում էր Հայաստանի հետ Արցախի կապի ողջամիտ լայնությամբ միջանցք և հայկական կողմերի համար լուրջ բանակցությունների թեմա էր այդ տարածքներից փոխհատուցում ստանալը այն տարածքների փոխարեն, որոնք մնացել էին Ադրբեջանի վերահսկողության ներքո՝ Մարտակերտի, Մարտունու շրջաններից հատվածներ և Շահումյանի շրջանը: Ակնհայտ է, որ պատշաճ աշխատանքի դեպքում Արցախի կազմում կմնային այդ երկու շրջանների զգալի հատվածներ: Հետևաբար, այդ դեպքում ներկայիս իրավիճակի համեմատ տարբերությունը կլիներ ոչ միայն այն, որ ընդհանրապես կհաջողվեր խուսափել զոհերից, այլև Արցախը չէր ունենա տարածքային կորուստներ, չէր կորցնի մեծաքանակ ռազմական տեխնիկա, կունենար կահավորված և ամրապնդված նոր դիրքեր և այլն: Ուրեմն «կլիներ նույն իրավիճակն առանց զոհերի» ձևակերպումը կեղծիք է: Հավանաբար դա նկատել է նաև կառավարության ղեկավարը՝ օգտագործելով 31-րդ հոլման ձևակերպումը՝ արդեն խոսելով մեղքի մասին և ընդունելով իր մեղավորությունը զոհերի հետ կապված.

> «Տարածքները հանձնելով՝ ես գուցե կարող էի հազարավոր կյանքեր փրկել: Հրաժարվելով դա անել՝ ես, ըստ էության, հազարավոր մարդկանց մահվան մեղավորը դարձա»[33]:

[33] Ես պետք է ժողովրդին հայտնեի, որ միջազգային հանրությունը պահանջում է հանձնել յոթ շրջանները. Փաշինյան, https://news.am/arm/news/696349.html

Այստեղ էլ մեղմացուցիչ հանգամանք մատնանշելու փորձ կա՝ տարածքներ չհանձնելու նպատակադրում ակնարկելով: Սակայն, ինչպես վերը ցույց տրվեց, խնդիրը ոչ թե տարածքներ հանձնել-չհանձնելն էր, այլ խնդրի լուծման վերաբերյալ իրական պատկերացում չունենալը, տգիտությունն ու գավառական մտածողությամբ կենսական նշանակություն ունեցող պետական խնդիրների լուծման ձախողման դատապարտված փորձը:

Սակայն, այնուամենայնիվ, ելույթում կատարվածին համարժեք ինքնագնահատական հնչել է՝ «դա ավելին է, քան դավաճանությունը»[34]:

Եզրակացություն

2021թ. բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ Արցախյան երկրորդ պատերազմի պատճառների, աղետալի հետևանքների ու հետագա զարգացումների վերաբերյալ Հայաստանի կառավարության ղեկավարի ընդարձակ ելույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Թեև այն ներկայացվեց որպես հուզախառն, ինքնաբուխ ելույթ, սակայն, առանցքային գաղափարների սևեռուն զարգացումը, կործանարար մոտեցումների հետևողական կիրառումը, և, ինչպես այլ դեպքերում, ստի, աճպարարության ու նենգափոխումների համակարգված համադրումների տոտալ կիրառումը վկայում են, որ ներկայացվեց մոտեցումների ու գործողությունների նախապես մանրակրկիտ մտածված ծրագրային փաթեթ, որը պարունակում է Հայաստանի ու Արցախի պետականությունների կործանման իրական վտանգներ:

2. Ներկայացված ծրագրային քայլերի ու հետագա զարգացումների վտանգավորությունն էապես մեծանում է նոր աշխարհակարգի հաստատման համար մղվող պայքարի՝ վճռական փուլ թևակոխումով, երբ կիրառվում են ոչինչ ու ոչ ոքի չխնայող միջոցներ, մեխանիզմներ ու գործողություններ՝ աղետալի հետևանքներ ունենալով դրանում ընդգրկված և անգամ այդ խառնարանում դեպքերի անբարենպաստ զարգացման հետևանքով հայտնված կողմերի համար:

3. Լարվածության կտրուկ մեծացման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ կառավարությունն ու դրա ղեկավարը սկսել են կորցնել ինքնատիրապետումը, ակամա բացահայտում են մինչ այդ ստով ու աճպարարությամբ քողարկված իրենց գործողություններն ու անգամ խոստովանում, որ գիտակցում են իրենց գործած մեղքերի ծանրությունը, արձանագրելով՝ «դա ավելին է, քան դավաճանությունը»:

[34] Հողեր չհանձնելով, փաստորեն, հազարավոր զոհերի հանգեցրած որոշումների հեղինակ դարձա. Փաշինյան, 13.04.2022, https://news.am/arm/news/696337.html

4. Հայաստանի ու Արցախի համար ստեղծված ներկայիս ծայրահեղ բարդ ու խիստ վտանգավոր իրավիճակում հայաստանյան ընդդիմության առաքելությունը նոր ձևակերպում պետք է ստանա. անհրաժեշտ է լուրջ հետևություններ անել պայքարի նախորդ երկու փուլերում թույլ տրված սխալներից, ձերբազատվել արտաքին ազդակներով պայմանավորված խոստումներից ու հորդորներից, ինչպես նաև ներքին գործոնների արհեստական թերագնահատումից («ժողովուրդը դեռ պատրաստ չէ» և այլն), արմատապես պետք է վերանայվեն գործունեության ձևերն ու միջոցները, պարզ ու հստակ պետք է հայտարարվի անկախության վերահաստատումից հետո անցած ողջ ժամանակահատվածում հատվածական շահերի դրսևորման, թույլ տրված սխալների ու բացթողումների կրկնումը բացառելու կամքի առկայությունը, ազատ, արդար և ինքն իրեն ու իր քաղաքացիներին պաշտպանելու ունակ Արցախի ու Հայաստանի Հանրապետությունների կառուցման վճռականությունը: Եթե ոչ, ապա ընդդիմությունը կդառնա անցյալ ու ապագա աղետների նույնպիսի մեղսակից, ինչպիսին իշխանությունն է՝ իր խոստովանությամբ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*